

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւարանիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Ց Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲԱՅՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«Մշակ» վեց ամսվա գինն է, յուլիսի 1-ից մինչև տարվա վերջը ՎՅՑ ռուբլի. մէկ ամսվա
նը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվայ համար 3 դոլլար,
Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:

Կարտութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելիս, պէտք է ղրմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;
իսկ արտասահմանից—TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա. Պ. Ա. Ի. Կ. Բ. Ա. Բ. Ն. Ո. Դ. Ա. Գ. Ի. Ց. Ո. Դ. Ն. Վ. Ո. Ի. Մ.

ԲՈՎԱՆՔԱԿՈՒԹԻՒՆ

Դիտարարութիւն և իրագործումն. — Ներ-
քիւն ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Շաշաղինի դաւա-
ւը. Նամակ Բագուից. Ներքին լուրեր. ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Արտաքին լուրեր. —Հնիւ-
ԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԴԻՏԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեզ հասած տեղեկութիւններէց երե-
ւում է, որ Երմիաշինը մտադիր է Թիֆ-
լիսի թեմի ուխտատեղերի վերաբերու-
թեամբ նոր կարգ սահմանել և նրանցից
ստացած եկամուտները այլ ևս չը յատ-
կացնել Ներսիսեան դպրոցին կամ մի որ և
է ուրիշ նպատակի, այլ ուղղակի մտցնել
հոգեւոր վարչութեան գանձարանի մէջ:
Այնուհետեւ հարց կը ծագի թէ այդ ե-
կամուտներն որ մասը պէտք է թողնել
Թիֆլիսի թեմի ծախքերի համար և որը
ուղարկել Երմիաշին, իբրեւ մնացորդ գու-
մար:

Ինչպէս յայտնի է, Ներսիսեան դպրոցը
սկսել է ստանալ ուխտատեղերի արգելնե-
րը իր հիմնարկութեան օրէն: Ներսէս
V կաթողիկոսը այդ միջոցով ցանկացել
է ապահովել իր հիմնած դպրոցի ծախքե-
րի մի մասը: Դա բոլորովին համապատաս-
խան է հաստատված օրէնսդրութեան, ո-
րով թեմական հոգեւոր դպրոցը պէտք է
պահպի իր թեմի արդիւններով և նը-
պատենքով: Ներսիսեան դպրոցի հոգա-
բարձութիւնը երկարամեայ իր գործու-
նեցութեամբ մշակել է ուխտատեղերի կա-
ռավարութեան յայտնի ձև, եւնթարկել է
եկամուտները և ծախքերը հաշուետուու-
թեան և ձեռնարկել է մի շարք նորոգու-
թիւնների թէ ուխտատեղերի և դպրոցի
տարեկան եկամուտները ծախսելու և թէ
փոխ աւանդով իրան պատկանող միւս
գումարները:

Անկասկած, եթէ դիտարարութիւն կայ
ուխտատեղերի եկամուտներին տալ նոր
գործարարութիւն, դա չէ կարող մի անգա-
մից, մի րօպէի մէջ իրագործվել, այլ դա
պէտք է կատարվի աստիճանաբար, որոշ
կերպով պարզելով այն բոլոր հաշիւները,
որոնք վերաբերում են այդ ուխտատեղե-
րին: Անկարելի է, որ մի տնտեսական
գործ, որ տասնեակ տարիներ գոյութիւն է
ունեցել, յանկարծ մի օրում փոխվի և այն էլ
առանց գիտութեան այն հիմնարկութիւն-
ների, որոնց հսկողութեան տակ նա ա-
ռաջ է գնացել: Ներսիսեան դպրոցը իր
տարեկան նախահաշիւը կազմելու համար
մինչև այժմ աչքի է ունեցել և ուխտա-
տեղերի եկամուտները. ուստի նա կարող
է յայտնի դիտարարութիւնների մէջ ընկնել,
եթէ առանց հետաւում լինելու նրա հա-
շուեկշիւին, մի խոշոր գումար հանվի նրա
նախահաշիւից:

Սակայն եթէ մի րօպէ ընդունենք, որ
Ներսիսեան դպրոցը ուրիշ հասցիներ և
եկամուտներ չառ ունի և առանձին կո-

րուստ չի ունենայ, եթէ զրկվի ուխտա-
տեղերի արգիւններից, այն ժամանակ ա-
ռաջ է գալիս մի լուրջ և բոլորովին բնա-
կան հարց՝ ուխտատեղերի կանոնաւոր և
բարեկարգ կառավարութեան մասին: Այդ
հարցը պէտք է ուշի ուշով ընկնի և
գործնական բաւարար լուծում ստանայ,
որպէս զի ուխտատեղերի տնտեսութեան
վերաբերութեամբ մտցրած այն մի քանի
բարի կարգերն էլ չոչնչանան և այդ ուխ-
տատեղերն էլ չը դառնան նոյնպէս ա-
ռանց եկամուտի, ինչպէս են այն բազմա-
թիւ ուխտատեղերը, որոնք գտնվել են
անմիջապէս հոգեւոր կառավարութեան
ձեռքին: Հեշտ է վերցնել ուխտատեղերը,
բայց այնքան էլ հեշտ չէ նրանց կանոնա-
ւոր կառավարելը: Այնուհետեւ միւս հար-
ցը, որ վերաբերում է թեմի ծախքերին,
նոյնպէս պէտք է լուծվի լուրջ տեղեկու-
թիւնների հիման վրա: Ի՞նչը համարել
թեմի կանոնաւոր և անհրաժեշտ ծախք
է որ մնացորդը համարել Երմիաշինապատ-
կան:

Նախ քան այս հարցերը վճռելը ան-
նպատակաբար մի է քննել սահմանված
կարգը, որ մինչև այժմ տուել է համեմա-
տաբար լաւ հետեւներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Բարեխիղճ, դիտնական ուսումնասիրութիւն-
ները օր օրի վրա աւելի փաստեր են լոյս հա-
նում, որոնք ցոյց են տալիս թէ ինչ ահաւոր
ղեղարկութիւններ է ծնեցնում ալիօսը: Արդէն
բացարձակ ճշմարտութիւն է դարձել, որ յա-
նաճեցների թիւը մեր երկրում մեծ կախում ու-
նի ալիօսի գործածութիւնից: Եւ ահա փառ-
տեր, որ հաւաքել է պրօֆէսոր Սիկորսկի և աը-
պագրել է «Журналъ Журналистовъ» հանդէսը:

Ուսումնասիրի բրեկական տարեգրութեան մէջ
1887 թվականը պէտք է համարվի մի բացա-
րիկ, տխուր տարի: Այսպիսի յատկութիւն-
ներ այդ տարին ունեցել է այն պատճառով,
որ ողբից ըմպելիքների գործածութիւնը շատ
է եղել. պաշտօնական տեղեկութիւններից
երևում է, որ 1887-ին դանձարանք խմիչե-
ներից ստացել է արդիւնք 20,528,075 ռուբլով
աւելի քան նախընթաց 1886 թվականին: Այդ
հանգամանքին պէտք է վերագրել, որ 1887-ին
յանցանքների թիւը, նախընթաց տարու հետ
համեմատած, աւելացաւ (սպանութիւնների թի-
ւը 10%): Հազիւ թէ հարկաւոր լինի մի բան
աւելացնել այս փաստերին: Կարող ենք մի-
այն ասել, որ 1885 թվականը անբերրի էր,
սաստկացրեց ընդհանուր մահացութիւնը և
աւելացրեց անախկալ մահերի թիւը, բայց և
այդպէս նա այն աստիճան չը դիպաւ ժողո-
ւրդական հոգուն, ինչպէս առատ և առողջու-
թեան տեսակէտից բարեբաղը 1887 թվա-
կանը: Ալիօսը այն միջնորդն էր, որ առա-
տութիւնը և բարեկեցութիւնը դարձրեց ժո-
ղովրդական անբարոյականութեան և ժողո-
ւրդական կորստի դրօշը:

Սարսափելի է մանաւանդ այն աղղեցու-
թիւնը, որ գործում է ալիօսը կանանց վրա:
Մենք ծայրահեղ հասարակական վտանգ

ենք տեսնում այն բանի մէջ, որ ամեն տեղ
երևան են գալիս կանանց առողջութեան և
բարոյականութեան քայքայման նշաններ:
Ճիշդ է, թէ հիւանդութիւնների և թէ յանցա-
գործութիւնների կողմից կինը նշանաւոր չա-
փով տեղի է տալիս տղամարդին, բայց այն
առավարչութիւնը, որ անում է կինը երկու
դէպքերում էլ, աւելի արագ է քան տղա-
մարդկանց մօտ, այնպէս որ կինը ձգտում է
հաւասարվել տղամարդի հետ հիւանդագին և
անբարոյական արտաքայտութիւնների մէջ:
Կանանց պատիւ և բարոյական արժանաւոր-
ութեան ցած ընկնելը առանց հիմքի չէ, որ
համարվում է հասարակական վտանգաւոր ե-
րևոյթ: Կրան անխուսելի կերպով հետևում
է այդ զգացմունքների անկումը ամբողջ հա-
սարակութեան մէջ, և կինը կարող է հասա-
րակութեան անբարոյականացման գործիք լի-
նել: Առանձին ուշադրութիւն է գրաւում այն,
որ կանայք ընտանեկան կապերի հիմքը խա-
ղաւրդում են ցոյց տալիս և այդ բա-
նը երևում է նրանց, որ բազմաթիւ են յա-
նաճեցները հասարակական բարոյականութեան
դէմ, իսկ մի քանի տեղերում երեխաների
սպանութեան դէպքերը սպառնալի թւեր են
կաղնում:

Ահա թէ ինչ ահաւոր թշնամի ունենք մեր
առջև: Շատ ենք ասել, բայց երբեք յարմար
դէպքում չենք դադարել կրկնել, որ մեր հասա-
րակութիւնը պարտաւոր է, իր սեփական շահե-
րի համար, աչք բաց անել՝ ահաւոր դժբաղդու-
թիւնը տեսնելու համար: Բայց տեսնելը բաւա-
կան չէ, եթէ միաժամանակ կտրուկ միջոցներ
ձեռք չառնեն ալիօսի ցամաքութեան դէմ: Բժշկվել
այդ ախտից դժուար չէ. բաւական է, որ լինի
բարի կամք: Իսկ այդպիսի կամքը շատ և շատ
հարկաւոր է. թշնամին սպառնում է ոչնչացնել
այն բոլոր խաղախները, որոնց վրա պահվում
է ընտանեկան, հասարակութիւնը: Այնքանը մի-
այն բաւական է, որ ցնցվենք և սարսափելի
կատաղութեամբ զինվենք այդ աւերիչ ոյժի դէմ...

Միջազգային միջնորդ դատարանը, մի վեհ
սկզբունք, որի վրա մարդկութեան լաւագոյն
բարեկամները դրել են իրանց ամենագեղեցիկ
յոյսերը, վախեցնում է այն կառավարութիւննե-
րին, որոնք առհասարակ չեն ուղի, որ արդա-
րագիտութեան առաջ կանգնեն իբրեւ պատաս-
խատու: Միանգամայն պարզ և հստակալի
է, որ այդտեսակ կառավարութիւնների մէջ ա-
ռաջնակարգ տեղը Թիւրքիային է պատկանում:
Հաագայի կոնֆերանցիան քննում է միջնորդ դա-
տարանի հարցը, և ահա Նիդըրլանդների իրա-
ւանքման մէջ են ու խորհրդակցութիւններ են
կաղնում: Ամենից առաջ կայ այն հանգաման-
քը, որ այդ մարդկանց պէս ապերախտներ շատ
բնի են գտնվել աշխարհում: Եւրօպայի անթիւ
դոհեր է տուել, հարկաւոր սասանեցող փառ-
տեր է հանել, որպէս զի ցոյց տայ, թէ ինչպէս
է ինքը ուղում պահպանել Նիդըրլանդական
ներքին իրանց դիրքի և աղղեցութեան մէջ: Եւ
սակայն «Новости» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը
գրում է.

Թիւրքիան միշտ համարում է իրան քրիս-
տոնեայ Եւրօպայի գահ: Նա վախում է, թէ
որ և է բաղկանեան պետութեան կամ մի օրիշ
մեծ պետութեան հետ ունեցած երկպառակու-
թեան դէպքում, միջնորդ դատարանը, որ
քրիստոնէական է, կը լինի ոչ յօդուտ Թիւր-
քիայի: Կարճ ասելով, միջնորդ դատարանից,
ինչպէս կարծում են մի քանի օսմանեան
գործիչներ, լաւ բան չի դուրս գալ: Բայց ու-
րիշները, որոնք աւելի լաւ տեղեկան են և ա-
ւելի յոռեան, ասում են թէ Թիւրքիան կը
վնասվի կոնֆերանցիայից և նոյն իսկ այդ
վնասն արդէն տեղի է ունեցել քրիստոնեայ
հպատակներին կառավարելու վերաբերու-
թեամբ:

Նիդըրլանդները գուցէ և հիմք ունեն: Բայց
հօ Եւրօպայի չէ կարող ոչնչացնել միջազգային
միջնորդ դատարանի պէս մի հիմնարկութիւ-
նը լոկ այն պատճառով, որ դա վախ է պատ-
ճառում Թիւրքիային: Վաղեմ է յայտնի, որ
այն, ինչ կենսական, առավարչման պետու-
թիւնների համար կենսի և երջանկութիւն է,
Թիւրքիայի համար մահ է և դժբաղդութիւն:
Բայց զոհեր կան, որոնք արժանի չէ այդ փառ-
պետութիւնը: Ամբողջ քաղաքակրթ լաւագոյն

համար չափազանց ծանր, չափազանց ցաւալի
դոհ կը լինի, եթէ միջնորդ դատարանը բոլոր
պետութիւնների կողմից ընդունվի ցանկալի և
օգտակար, բայց չիրականանայ՝ օսմանեան սիր-
տը ահ ու դող չը գցելու համար: Մինչև այժմ
Թիւրքիան ինչ լաւութիւններ ունի արած մարդ-
կութեան, որ այդքան մեծ դոհի ախկալութիւն
ունենայ...

Օղեսայում տեղի է ունեցել մի դէպք, որ
ցոյց է տալիս անհամբաւելութեան ցաւալի հե-
տեանքները: ՊՕՄԵ լրագրի թղթակիցը այսպէս
է նկարագրում այդ դէպքը: Նաւերից ապրանք
դուրս տալը և նաւերի մէջ ապրանք անելը
Օղեսայում կատարվում է եկտր բանուորների
ձեռքով: Մէկը վերցնում է կապալով այդ գոր-
ծը և բերել է տալիս բանուորները զանազան
տեղերից: Մեծ մասամբ այդ բանուորները Կով-
կասից գնացած վրացիներ են, որ շատ աշխա-
տում են և, ինչ խօսք, հարստացնում են կա-
պալաւորներին: Կան և հայ բանուորներ: Կա-
պալաւորները շահագործում են բանուորներին
և այնքան անխիղճ կերպով, որ յաճախ տեղի
էին ունենում ընդհարումներ, որոնք դատաս-
տանական գործեր էին առաջ բերում:

Հայ բանուորների մի խումբ, որ աշխա-
տում էր ուսուցչ ընկերութեան շողենաւե-
րում, դժգոսութիւն ունէր իր կապալաւոր
Խրիստիի դէմ: Պատճառը վարձն էր. մի քա-
նիսները անբաւական էին, որովհետեւ այդ
վարձը չնչին էր, միւսները—որովհետեւ վարձը
կանոնաւոր կերպով չէր տրվում: Բանուոր-
ները դիմեցին շողենաւային ընկերութեան
գրասենյակը խնդրելով ազատել իրանց կա-
պալաւորից, այսինքն գործն անմիջապէս ի-
րանց յանձնել: Գրասենյակում նրանց պա-
տասխանեցին թէ ընկերութիւնը չէ կարող
գործ ունենալ զանազան բանուորների հետ,
պէտք է մի մարդ, որ գրաւականով ապա-
հովանէ աշխատանքների կանոնաւոր ընթաց-
քը: Այդ ժամանակ հայերը վերջնականապէս
հեռացան իրանց կապալաւորից, իսկ վեր-
ջինս շտապեց նրանց տեղ վրացի բանուոր-
ներ դնել: Եւր վրացիները «Россия» շողենաւի
վրա էին բանում, հայերը պահանջեցին որ
նրանք հեռանան: Հայերը կշտամբում էին
վրացիներին, որ նրանք չեն թող տալիս ի-
րանց ընկերներին լաւացնել իրանց դրութիւ-
նը: Վրացիները պատասխանեցին թէ իրանց
վարձը են և իրանք պարտաւոր են դրածը:
Խօսք ու պատասխան, չուտով բանը փոխ-
վեց վեճի, վեճն էլ դարձաւ կռիւ: Գործ դրվե-
ցան աղիւններ, քարեր: Կովը կարճ տեղեց,
ընդամենը մի քանի րօպէ, բայց այս կարճ
միջոցում էլ մի քանի հատ սատարիկ ձեռված-
ներ եղան: Ծուռով երևացին մօտ 50 ոստի-
կաններ: Վնասվածներին ուղարկեցին քաղա-
քային հիւանդանոց...

Ինչ ասել կուզի, որ բանուորական այս
տեսակ համաբաւելութիւնից օգտվողները մի-
այն և միմիայն կապալաւոր Խրիստիները կը
լինեն:

ՇԱՄՇՈՒՆԻ ԳԱՍՍՈՂ

(Նամակ գիւղից)

Երբ գրիչ եմ վերցնում գրելու, ամենից ա-
ռաջ աչքիս պատկերանում է հայ գաւառների
խոր տղիտութիւնը, անբերրութիւնից տանջվող
ժողովուրդը, որը տառապում է հացի պակասու-
թիւնից մինչև օրս, և դուցէ դեռ շատ տարիներ
այդպէս մնայ առանց մարդի չափ բարեփոխու-
թեան:

Այս անգամ խօսքս լինելու է Շաշաղինի
գաւառի մասին, ուր դիպվածով շրջեցի մի չա-
բախ և եղայ մի քանի րօպէ և թուրք գիւղերում:
Տխուր, շատ տխուր հայաւորութիւնները ստա-
ցայ այդ գաւառի գիւղերից: Նոյն նահապետի օ-
րով եղած գովմանն է՝ 8—9 լուծ գոմէշ և եղը
լծած 5—6 հոգով: Տէր Աստուած, մտածում է
մարդ, որքան իլուրդ աշխատանք են գործ դը-
նում այդ քանի վրա, մինչդեռ կարելի է աւելի
բնի ոյժով աւելի լաւ գովման լծել... Հողերը
պարարտացնելու սովորութիւն բոլորովին չը
կայ: Նոյն չուրի ու տափանք, նոյն գերանդին
ու մանգալը, նոյն կամի ու կալ... Այ մի ար-
հեստ կամ մասնագիտութիւն չը կայ գիւղերում,

Типографія Грузинск. Т.—ва Орбелиановская ул., № 27.